ենթարկուած՝ կեանքի ցնցող եւ տարօրինակ ռիթմին։

Բաւական է աչք նետել աշխարհագրական քարտէսի վրայ տեսնելու համար, թէ ինչքա՞ն, մարդկային տեսակէտից, նա պատռտուած է մտահոգութիւններով եւ ենթակայ ողբերգական այլափոխութիւններին։

Հեռաւոր Արեւելքը՝ դարաւոր եւ լայնատարած այս աշխարհը՝ խրտնած ձիի նման երկու ոտքերի վրայ է ցցւում, բուդայական իր ժպիտը ահաւոր դանակների տակ մորթում ու թուղթէ պատերի մօտ ռումբ զետեղում։ Նոր գիտակցութեան ալիքները դալիս բախւում են տիեզերական ովկիանոսին ու հեղեղի նման շարժւում։

Ռուսաստանը իր արիւնած մատերը թափ է տալիս մարդկութեան գլխին եւ մարքսիստական նախադասութիւնների տակ, անծայր դաշտերում, թաւալւում է տարակուսանքների մէջ։

Հնդկաստանը հսկայ իր մշակոյթը Գանդէսի մէջն է սուզում եւ բռնաւոր հրացանների առջեւ Գանդին սրբանում է։

Ու Փոքր Ասիան, Եգիպտոսը, սեւամորթերի Աֆրիկան։

Անտառները շարժւում են։ Հոգիների մէջ ֆոսֆորէ աչքերով վագրեր են անցնում։ Եւրոպան պատրաստւում է նոր պատերազմների։ Անհասկանալի ուժեր մարդկութեան ենթադիտակցութեան մէջ ալիքներ են տրորում ու խորհրդաւոր բոցի նման բոլոր հին արձանագրութիւնները այրում, իմաստագիտական սահմանները ջնջում, արժէքները փոշիացնում։

Ամէն ինչ անկայուն է։ Երկու աւազակների միջեւ տնկուած Քրիստոսի խաչի պէս երկրագունդը երերում է, դաշտերը բարձրանում են եւ երկինքը վայր է իջնում։

Մենք, հայերս, երկու աշխարհների մէջ — երկո՞ւ։— չո՛ր աշխարհների մէջ — այսինքն՝ ոչ մի տեղ — սէլի մէջ ընկած հին իրեղէնների նման կպչում ենք եղերքներին եւ նոր հոսանքների տակ քշւում, գնում...

Մենք, հայերս, արեւելցի ենք թէ՞ արեւմուտցի։ Չենք մտածած։ Մենք ոչինչ չենք իմանում։ Մենք, մարդկութեան միութիւնը փնտռող քրիստոնեանե՞ր ենք։

Մենք ի՞նչ ենք։

* * *

Ասում են՝ Արեւելք եւ Արեւմուտք։ Ըստ ինքեան՝ ոչինչ չնշանակող բառեր են։

Ուղղութիւնները կորած են։

Չինաստանի համար Հնդկաստանը (Si-Yu)՝ արեւմուտք է, Ճապոնը՝ (Ye'pen «արեւի ելքը») արեւելք։ Եւրոպայի համար Ամերիկան արեւմուտք է, իսկ արեւելցիների համար արեւելք է։

Մի խօսքով՝ երկրագունդը կլոր է։

Սակայն, կարելի չէ ուրանալ, որ իրրեւ պատմական որոշ ներյօրինման հետեւանք, կազմուել է եւ շարունակում է գոյութիւն ունենալ եւրոպական մի մտայնութիւն, որը հակադրւում է մնացած աշխարհին։

Այդ տեսակէտով գոյութիւն ունին Արեւելք եւ Արեւմուտք։

Արեւմուտքը Եւրոպան է, այն հողամասը, ուր բնակչութեան տեղ են ընտրել արեւի ետեւից երկար ժամանակ ընթացող ժողովուրդների մի մասը։ Նրանք կարողացել են ստեղծել ուրոյն ապրելակերպ, աշխատելու, դրծելու, զգալու բնորոշ ձեւեր եւ առանձնայատուկ մտայնութիւն։

Պարոն Պօլ Վալերին, տիպական լատին մտածող, այսպէս է համադրում այդ մտայնութիւնը.—

«Ամէն տեղ, ուր Եւրոպական ոգին տիրում է, առաջ է գալիս կարիքների առաւելագոյնը, աշխատանքի առաւելագոյնը, դրամաբլխի առաւելագոյնը, ուժի առաւելագոյնը, արտաքին բնութիւնը փոփոխութեան ենթարկելու առաւելագոյնը, յարաբերութիւնների եւ փոխանակութիւնների առաւելագոյնը»։

Գոռոզ Եւրոպական ոգու այդ կատարեալ պատկերի մէջ հայեցողական եւ ոչ մի կէտ կայ։

Իսկապէս, Եւրոպացին չինարար է։ Եւրոպան կանոնաւորուած մի երկիր է։ Աշխարհի այս անկիւնում, ուր ֆիզիքական ազդեցութիւնները կատարելապէս հաւասարակշռուած են, մարդը ապրում է կառուցանելու համար։ Վազում է, յուզւում, տակնուվրայ անում հին

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան